Հաստատված է

«ՍԵԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/10»» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերով

գնումներ կատարելու ընթացակարգի հանձնաժողովի

2014թ. «փետրվարի» «14»-ի թիվ «1» որոշմամբ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

ՀՐԱՎԵՐ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին ‘<<ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում>> ծրագրի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու մարզահագուստ Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « ՍԵԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/10»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մինչև 2014թ. փետրվարի 27 -ը, ժամը՝ 15:00-ը:

Հայտերը կբացվեն 2014թ. Փետրվարի 27 -ին, ժամը՝ 15:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովելու համար մարզահագուստի ձեռքբերում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ***(Հավելված N 5),*** ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ ***(Հավելված N 5.1):*** Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ»

պետական հիմնարկի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

secig@mail.ru

Գնումների պատասխանատու՝ Աննա Մխիթարյան

Հեռախոս՝ (096-601-101/:

Պատվիրատու՝ «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

ՄԱՐԶԱՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ----------

ք. Երևան << >> <<---------- >> 2014թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը , ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մ. Սարգսյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա , այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և ----------ն, ի դեմս տնօրեն ----------, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ ----------- (----------) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

Երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից աշխատանքը կամ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա պայմանագրի կողմը պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները□

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ.

2) Վաճառողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության <<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ
Հասցե՝ Ք.Երևան Սարյան 22, 16-րդ հարկ
ՀՎՀՀ 02599765
հ/հ 900011111136
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Տնօրենի պաշտոնակատար՝

---------- Մ. Սարգսյան

Կ.Տ.

Հավելված N 1
---------- —— -2014 թ. ին կնքված
N ՍԵԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/10 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Գնման առարկայի անվանումները	Չափի միավորը	Քանակ	Չափսեր	Տեխնիկական Բնութագիր
1	2	3			4
1.	Մարզահանդերձանք (սպորտային կոստյում, սպորտային պայուսակ, սպորտային գլխարկ, սպորտային շապիկ, սպորտային կոշիկ(բոթաս),բաճկոն)	Լրակազմ	*420	XS,S,M,L,XXL,XXXL XXXXL Կոշիկի չափսերը 37,38,39,40,41,42,43,44 45,46	**Սպորտային կոստյում՝** (համազգեստը) բաղկացած է պիջակից և տաբատից: Գույները՝ կարմիր, կապույտ, սպիտակ կամ դրանց համադրությունը: 100% բամբակ է: Խտությունը՝ 290գ/մ²: Համազգեստի պիջակը ուղիղ է: Դիմացից կայծակ-ճարմանդով: Օձիքի վրա երկու կողմից անցնում են երկու գոլեր՝ հակապատկեր գույներով: Կրծքավանդակի կենտրոնում՝ ասեղնագործված է «ARMENIA», թիկունքի կենտրոնում՝ ՀՀ զինանշանը, կրծքավանդակի ձախ կողմից՝ ՀՀ զինանշանը, կրծքավանդակի վերևի մասը աջ կողմից՝ արտադրողի ապրանքանշանը, թիկունքի վերևի մասում՝ ՀՀ դրոշը: Համազգեստի տաբատը ուղիղ է: Դիմացի մասում գրպաններ են՝ չերևացող կայծակ-ճարմանդով: Գոտու մեջ տեղադրված է էլաստիկ հյուս: Աջ ոտքի դիմացի կողմից՝ ասեղնագործված «ARMENIA» , տաբատի ձախ կողմը՝ արտադրողի ապրանքանշանը: <<ADIDAS>>, <<NIKE>>,<<FORWARD>>, <<FILA>> ֆիրմայի կամ համարժեքը: **Սպորտային պայուսակ՝** պատրաստված է 100 % պոլիէստերից գույնը՝ կապույտ, կարմիր: Միջին չափսերի (չափսը՝

					510x320x310մմ), խտությունը՝ 420գ/մ²։ Դուրս քաշվող բռնակով, ակերի վրա։ Կենտրոնական հատվածում պայուսակը կոչկվում է կայծակ-ճարմանդով։ Ներքին մասում վերևից գտնվում է ցանցե գրպանը։ Կողքի վրա, դրսի կողմից գտնվում է գրպանը «ARMENIA» գրառումով։ Հայաստանի դրոշի շևրոնը գտնվում է գրպանի վերևի մասում։ Կողքի վերևի մասում գտնվում է գրպանը այցեքարտերի համար։ Բռնիչները խաչաձև են՝ հատուկ ուսադիրով։ Դիմացի գրպանի վրա՝տպված է «ARMENIA» բառը, տառերի գույնը՝ ոսկեգույն։ Դիմացի մասում՝ՀՀ դրոշը, կողքի հատվածում՝ արտադրողի ապրանքանշանը։ <<ADIDAS>>, <NIKE>>,<<FORWARD>>,՝<<FILA>> ֆիրմայի կամ համարժեքը։ **Սպորտային գլխարկ՝** հիմնական գույնը սպիտակ, կարմիր։ Սպորտային գլխարկը 100 % բամբակ, խտությունը՝ 320գ/մ²։ Լայն և կոշտ եզրով (պլաստիկ), որի վրա արտադրողի ապրանքանշանն է։ Հարմարության համար հետնամասում չափսի շարժական կարգավորիչն է։ Ճակատային հատվածում գտնվում է շևրոնը, որի վրա գտնվում է ՀՀ զինանշանը և «ARMENIA» գրառումը (3D տառատեսակով)։ Գլխարկի աջ կողմում ասեղնագործված է արտադրողի ապրանքանշանը։ Գլխարկը պատրաստված է առանց աստառի։ Գլխարկի կենտրոնում՝ ասեղնագործված է «ARMENIA», շևրոնը՝ ՀՀ զինանշանով, գլխարկի ձախ կողմում՝ ՀՀ դրոշը՝ ասեղնագործված, գլխարկի աջ կողմում՝արտադրողի պրանքանշանը,, կոշտ եզրի վրա պատկերված է արտադրողի

					ապրանքանշանը, հետևի մասում՝ մետաղե ճարմանդը: <<ADIDAS>>, <NIKE>>,<<FORWARD>>, <<FILA>> ֆիրմայի կամ համարժեքը: **Սպորտային շապիկ՝** հումքը՝ տրիկոտաժ, 100% բամբակ: Գույնը՝սպիտակ, կարմիր, կապույտ: Շապիկի խտությունը՝ 200գ/մ2, իսկ օձիքինը՝ 600-650գ/մ2: Օձիքը բամբակյա է: Դիմացի մասում կոճակներ POLO-ի ձևով: Կրծքավանդակի ձախ կողմի վերևի մասում՝ ՀՀ զինանշանը, կրծքավանդակի աջ կողմի վերևի մասում՝արտադրողի պրանքանշանը, թիկունքի վերևի մասում՝ Հայաստանի Հանրապետության դրոշը:<<ADIDAS>>,<<FILA>>, <<NIKE>>,<<FORWARD>>, ֆիրմայի կամ համարժեքը: **Բաճկոն՝** անջրաթափանց է, պատրաստված է 100% պոլիէստերից, խտությունը՝110գ/մ²:Գույները՝սպիտակ, կարմիր, կապույտ կամ դրանց համադրությամբ: Բաճկոնի ձևը՝ ուղիղ, աստառով: Աստառը նույնպես 100% պոլիէստեր: Դիմացի մասում կենտրոնում գտնվում է քամուց պաշտպանող կայծակ-ճարմանդը: Կրծքավանդակի մասում գրպաններ են՝ կայծակ-ճարմանդով: Օձիքի մասում գտնվում է գրպանը կնգուղի (կապիշոն) համար: Բաճկոնի լայնությունը կարգավորվում է առաձգական թելով և սեղմակներով: Կրծքավանդակի կենտրոնում՝ ասեղնագործած է «ARMENIA», թիկունքի կենտրոնում՝ պատկերված է ՀՀ զինանշանը, կրծքավանդակի վերևի ձախ կողմից՝ ՀՀ զինանշանը, թիկունքի վերևի մասում՝ տեղադրված է ՀՀ դրոշը, կրծքավանդակի

					վերևի մասում աջ կողմից՝ արտադրողի ապարանքանշանը: <<ADIDAS>>, <<NIKE>>,<<FORWARD>>, <<FILA >> ֆիրմայի կամ համարժեքը: **Սպորտային կոշիկ (բոթաս)՝** :Մոդելը՝ կլասիկ, կարված կոմբինացված սինթետիկ նյութերից՝ դիմացի վերևի հատվածը սինթետիկ, լեզվակը՝ տեքստիլ: Գույնը սև կամ սպիտակ: Լեզվակի վրա և յուրաքանչյուր զույգի դրսի ետևի հատվածում տեղադրված է արտադրողի ապրանքանշանը: Քուղը՝ սև կամ սպիտակ: Կոշկատակը հատուկ ամրության ռետինից՝ թերմոպլաստիկ էլաստոմերից, <<ADIDAS>>, <<NIKE>>,<<FORWARD>>, <<FILA>> ֆիրմայի կամ համարժեքը:

***200 լրակազմը բաճկոնով է, իսկ 220-ը առանց բաճկոնի**
Պարտադիր պայմաններն են՝

-ապրանքի չօգտագործված լինելը,

-բոլոր ապրանքատեսակները նույն ապրանքանիշի լինելը (բացառությամբ սպորտային կոշիկի),

-արտադրողի գրավոր համաձայնությունը՝ իր ապրանքանիշի օգտագործումը Հայաստանի հավաքական թիմի կողմից:

Գնորդ

Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարության
<<Սպորտի և երիտասարդական ծրագրերի
իրականացման գրասենյակ>> ՊՀ
Հասցե՝ Ք.Երևան, Սարյան 22,16-րդ հարկ
Հ/Հ 900011111136
ՀՎՀՀ 02599765
ՖՆ գործառնական վարչություն
Տնօրենի պաշտոնակատար՝

_____ Մ.Սարգսյան

Կ.Տ.

Վաճառող

Հավելված N 2
<< >> << >> 2014 թ. կնքված
N ՍԵԾԻԳ ՇՀԱՊՁԲ-11/10 *ծածկագրով գնման պայմանագրի*

ՄԱՐԶԱՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել մինչև 30.04.2014թ.				Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I կիսամյակ		II կիսամյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Մարզահանդերձանք(սպորտային կոստյում), սպորտային պայուսակ, սպորտային գլխարկ, սպորտային շապիկ, բաճկոն, սպորտային կոշիկ (բոթաս)	Լրակազմ		420*					
Ընդամենը				X		X	X	X	

*200 լրակազմը բաճկոնով է, իսկ 220-ը առանց բաճկոնի

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն <<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ
Հասցե՝Ք.Երևան, Սարյան 22, հարկ 16
Հայաստանի Հանրապետության

ՎԱՃԱՌՈՂ

ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ 900011111136
ՀՎՀՀ 02599765
Տնօրենի պաշտոնակատար՝
Մ. Սարգսյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
<< >> << >> 2014 թ. կնքված
N ՍԵԾԻԳ ՇՀԱՊՁԲ-11/10 *ծածկագրով գնման պայմանագրի*

ՄԱՐԶԱՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Մարզահանդերձանք(սպորտային կոստյում), սպորտային պայուսակ, սպորտային գլխարկ, սպորտային շապիկ, բաճկոն, սպորտային կոշիկ (բոթաս)				100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%

ԳՆՈՐԴ **ՎԱՃԱՌՈՂ**

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
<<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՊՀ
Հասցե՝Ք.Երևան, Սարյան 22, հարկ 16
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900011111136
ՀՎՀՀ 02599765

Տնօրենի պաշտոնակատար՝
Մ. Սարգսյան----------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4
<<____>> _____2014թ. կնքված
N ՍԵՇԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/10 ծածկագրով գնման պայմանագրի

Վաճառող	Գնորդ
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդը ի դեմս _____ և
Վաճառողը՝ ի դեմս_____,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը__ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Ապրանքների մատակարարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ ապրանքների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №5
<<ՍԵՏԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/10 >> ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

<<ՍԵՏԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/10>> ծածկագրով գնման

ընթացակարգին մասնակցելու դիմում

----------ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության <<Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կողմից՝<<ՍԵՏԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/10>> ծածկագրով հայտարարված ընթացակարգի ----------չափաբաժնի(երի) համարը---------- չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջների համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)---------- -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը) ---------- -ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

ընթացակարգի մասնակցի անունը (անվանումը)----------ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

---------- մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե ----------
--

Մասնակցի (ղեկավարի) պաշտոնը, անունը, ազգանունը /ստորագրությունը/

ամսաթիվըամիսը, 2014թ.

Հավելված №5.1
<<ՍԵՏԻԳ-ՇՀԱՊՁԲ-11/10>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1				
2				
3				

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

Մասնակցի (ղեկավարի) պաշտոնը, անունը, ազգանունը /ստորագրությունը/

ամսաթիվըամիսը, 2014թ.